Փոխանցման ձևերի կարգերը սահմանվում են օրենսդրությամբ:

(49-րդ հոդվածը և րաց. 24.10.11 ՅՕ-273-Ն)

Յոթված 50. Հավատարմագրային կառավարման հանձնելու միջոցով ջրային համակարգի օգտագործման իրավունքի փոխանցումը

Հավատարմագրային կառավարման կարող է տրամադրվել ջրային համակարգը կամ դրամասը :

Ջրային համակարգը հավատարմագրային կառավարման է տրամադրվում մրցույթային եղանակով :

Հավատարմագրային կառավարման հանձնելու դեպքում ջրային համակարգը (այդ թվում՝ մրցույթի պայմանները կատարելու համար հավատարմագրային կառավարչի կողմից ձեռք բերված գույքը) մնում է պետական սեփականության :

Ջրային համակարգը հավատարմագրային կառավարման տրամադրելու մրցույթի մասին հրապարակային հայտարարության մեջ նշվում են հավատարմագրային կառավարման ժամկետները, պահանջվող ներդրումներին մեծությունը, հավատարմագրային կառավարչին հասնելիք վարձատրության մեկնարկային չափը, ջրային համակարգի օգտագործման, ինչպես նաև տվյալ ջրային համակարգի աշխատողներին սոցիալական երաշխիքներին վերաբերող պահանջները :

Մրցույթին մասնակցելու համար հայտներ կայացրած անձը պետք է ներկայացնի հավատարմագրային կառավարման ծրագիր, որը պետք է ներառի՝

1) առաջարկության ներդրումներ կատարելու վերաբերյալ .

2) հավատարմագրային կառավարչի վարձատրության չափը .

3) հավատարմագրային կառավարման կատարումն ապահովող գրավի չափը .

4) ջրապահպան միջոցառումներին իրականացման ծրագիրը .

5) օրենսդրության մեջ սահմանված՝ մրցույթային պայմաններին վերաբերող առաջարկներ :

Հոդված 51. Ջրային համակարգի հավատարմագրային կառավարման ծրագիրը

Հավատարմագրային կառավարման ծրագիրը ջրային համակարգի կառավարչի գործառնության ստանձնելու նպատակով մրցույթին մասնակցելու հայտներ կայացրած անձի ծրագիրն է, որը պետք է բովանդակի՝

1) հավատարմագրային կառավարման տնտեսական նպատակահարմարության հիմնավորումը .

2) հավատարմագրային կառավարման նպատակներին հասնելու համար դրված խնդիրները, դրանց լուծման ուղիներին նկարագրող թյունը .

3) տեղեկություններ անձի տեխնիկական և մասնագիտական ապահովվածության մասին .

4) ջրային համակարգի արդյունավետ օգտագործման և գարգացման համար առաջարկվող (իրականացվելիք)

միջոցառումները, դրանց կատարման ժամկետները, ուղիները, պահանջվող ֆինանսական միջոցները և աղբյուրները:

5) այլ տեղեկություններ և դրույթներ, որոնք անհրաժեշտ կհամարվեն հայտներ կայացնող անձի կողմից:

Յոթերորդ 52. Ձրային համակարգի հավատարմագրային կառավարման մրցույթի արդյունքների գնահատման չափանիշները

Ձրային համակարգի հավատարմագրային կառավարման մրցույթի արդյունքների գնահատման համար կառավարող թյան կողմից սահմանվում են մրցույթին մասնակցելու համար ներկայացված ծրագրերի գնահատման սկզբունքներ՝ ծրագրի յուրաքանչյուր ոլորտում գնահատման չափանիշի, ինչպես նաև հավատարմագրային կառավարման պարտավորություններ կատարումն ապահովող գրավի գնահատման կշռային գործակիցների սահմանման միջոցով:

Հավատարմագրային կառավարման ծրագրի տեխնիկական, մասնագիտական ապահովվածությունը, ֆինանսական միջոցների առկայությունը բնութագրող ոլորտում, ինչպես նաև հավատարմագրային կառավարման պարտավորություններ կատարումն ապահովող գրավը ենթակա են պարտադիր գնահատման:

Մրցույթային առաջարկների գնահատման սանդղակում հավատարմագրային կառավարման պարտավորություններ կատարումն ապահովող գրավի գնահատման համար սահմանված կշռային գործակիցը չի կարող գերազանցել 0,25-ը:

Ձրային համակարգը հավատարմագրային կառավարման հանձնելու մրցույթը կարող է անցկացվել մասնակիցներին նախնական որակավորմամբ՝ կառավարող թյան սահմանած կարգով:

Յոթերորդ 53. Կոնցեսիայի պայմանագրի տրամադրման միջոցով ջրային համակարգի օգտագործման իրավունքի փոխանցումը

Կոնցեսիայի պայմանագրով կարող է տրամադրվել ջրային համակարգը կամ դրամասը:

Կոնցեսիայի պայմանագրով ջրային համակարգի կառավարումն ստանձնող անձի և Ձրային համակարգերի կառավարման մարմնի միջև կնքվում է պայմանագիր:

Կոնցեսիայի պայմանագրի տրամադրման դեպքում Ձրային համակարգերի կառավարման մարմինը կարող է՝

1) որոշում կայացնել որոշակի ջրային համակարգի նկատմամբ մրցույթային կարգով կոնցեսիայի պայմանագրի տրամադրման մասին:

2) կոնցեսիայի պայմանագիր շնորհել առաջին հայտատուին կամ, եթե միևնույն ջրային համակարգը կոնցեսիայի

պայ ման ազրո վ ստանալ ու համար մի աժամանակ դիմել են մի քանի հայ տատուներ, ընտրել այն հայ տը, որով առաջարկվում են Լավագույն պայմանները:

Յոթերորդ 54. Առևտրային կազմակերպության ստեղծմամբ պետական ջրային համակարգի օգտագործման իրավունքի փոխանցումը

Առևտրային կազմակերպություններում այլ անձանց ներդրումները չպետք է գերազանցեն կազմակերպության կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի 49 տոկոսը: Յայնպես տանի Յանրապետության և առևտրային կազմակերպության մյուս հիմնադրի (հիմնադիրներին) միջև կնքված պայմանագրով կարող են ախատեսվել պետությանը պատկանող բաժնետոմսերի (բաժնեմասի) տիրապետման (կամ կառավարման) իրավունքի փոխանցում տվյալ կազմակերպության այլ պետության կողմից ընտրված հիմնադրին (մասնակցին):

Ստեղծվող կազմակերպության կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի չափը, պետական սեփականություն մնացող բաժնեմասի (բաժնետոմսերի) և ոչ պետական բաժնեմասի (բաժնետոմսերի) հարաբերակցությունը սահմանում է կառավարությունը՝ ելնելով ջրային համակարգի՝

1) արժեքից, որը հաշվարկվում է կառավարության սահմանած կարգով:

2) հետագա արգացման հեռանկարներից և դրահամարան հրաժեշտ կապիտալ ներդրումների ծավալից:

Ջրային համակարգի օգտագործման իրավունքը կարող է փոխանցվել տվյալ ջրային համակարգի գույքի ներդրմամբ ստեղծված առևտրային կազմակերպությանը՝ համապատասխան օրենքի ընդունմամբ:

Յոթերորդ 55. Վարձակալության ամբջրային համակարգի օգտագործման իրավունքի փոխանցումը

Ջրային համակարգը վարձակալության է տրամադրում Ջրային համակարգերի կառավարման մարմինը՝ կառավարության որոշմամբ սահմանված կարգով:

Վարձակալության իրավունքը տրամադրվում է աճուրդով, եթե վարձակալից չի պահանջվում կատարել որևէ պայման: Աճուրդի քննարկման առարկա է հանդիսանում վարձակալական վճարի չափը:

Վարձակալության իրավունքը տրամադրվում է մրցույթով, եթե վարձակալից պահանջվում է իրականացնել նաև ջրային համակարգի արտադրական, տեխնիկական և բնապահպանական խնդիրներին հետկապված որոշակի պայմաններ:

Վարձակալի և Ջրային համակարգերի կառավարման մարմնի միջև կնքվում է ջրային համակարգի վարձակալության պայմանագիր:

Ջրային համակարգը մրցույթով կամ աճուրդով վարձակալության տրամադրելիս վարձավճարի հաշվարկային չափը համարվում է մեկնարկային: Ջրային համակարգի վարձակալան վճարի հաշվարկային չափը որոշում է Ջրային համակարգերի կառավարման մարմինը՝ կառավարության սահմանած կարգով: Վարձակալության պայմանագրով սահմանված վարձավճարի հաշվարկային չափը պետք է հնարավորության ստեղծի տվյալ բնագավառում իրականացնել շահույթաբեր տնտեսական գործունեություն:

Ջրային համակարգի վարձակալն իրավունք չունի վարձակալած գույքը հանձնել երկրորդ վարձակալության, վարձակալության պայմանագրով իր իրավունքներն ու պարտականությունները փոխանցել այլ անձի, վարձակալած գույքը հանձնել անհատույց օգտագործման, վարձակալության իրավունքը գրավդնել կամ որպես սավանդ ներդնել տնտեսական ընկերակցությունների և ընկերությունների կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում:

Յոթերորդ 55.1. Գույքի անհատույց օգտագործման պայմանագրի միջոցով ջրային համակարգի օգտագործման իրավունքի փոխանցումը

Ջրային համակարգի օգտագործման իրավունքի փոխանցումը կարող է իրականացվել գույքի անհատույց օգտագործման պայմանագրով:

Գույքի անհատույց օգտագործման պայմանագրով կարող է տրամադրվել ջրային համակարգը կամ դրամի մասը՝ անհատույց ժամանակավոր օգտագործման նպատակով, այդ գույքը նույն վիճակում՝ հաշվի առնելով դրա բնական մաշվածքը, կամ պայմանագրով որոշված վիճակը՝ վերադարձնելու պայմանով:

Գույքի անհատույց օգտագործման պայմանագիրը կնքվում է Յայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված կարգով:

(55.1-ին հոդվածը լրաց. 24.10.11 ՅՕ-273-Ն)

Յոթերորդ 56. Ջրային համակարգի օգտագործման իրավունքի պայմանագրի ժամկետի երկարաձգումը

Ջրային համակարգի օգտագործման իրավունքի պայմանագրի ժամկետը համարվում է երկարաձգված նույն ժամկետով, սակայն ոչ ավելի, քան Կարգավորող հանձնաժողովի տրամադրած լիցենզիայով նախատեսված իջեցման կողմերը, սույն օրենսգրքի և ջրային համակարգի օգտագործման պայմանագրի համաձայն,

օգտագործման իրավունքի դադարման մասին չեն հայտարարել պայմանագրի ժամկետի ավարտից առնվազն 6ամիս առաջ :

(56-րդ հոդվածը փոփ 23.06.15 ՅՕ-108-Ն)

Հոդված 57. Ջրային համակարգի օգտագործման իրավունքի դադարման հիմքերը

Ջրային համակարգի օգտագործման իրավունքը դադարում է , եթե`

1) Ջրային համակարգի օգտագործման պայմանագրով նախատեսված կարգով լուծվել է պայմանագիրը .

2) Լրացել է Ջրային համակարգի օգտագործման պայմանագրով նախատեսված ժամկետը և այն չի երկարաձգվել .

3) Լուծարվել է Ջրային համակարգի կառավարիչ իրավաբանական անձը .

4) մահացել է Ջրային համակարգի կառավարիչ ֆիզիկական անձը .

5) օրենսդրությամբ սահմանված կարգով արգելվել է Ջրային համակարգի օգտագործումը .

6) խախտվել են Ջրօգտագործման թույլ տվող ան և Կարգավորող հանձնաժողովի տրամադրած լիցենզիայի պայմանները :

Սույն հոդվածի 5-րդ կետի հիմքով Ջրային համակարգի օգտագործման իրավունքի դադարումը կարող է իրականացվել միայն Ջրային համակարգի կառավարչին հասցված վնասը և կորցված շահույթն օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցելուց հետո :

(57-րդ հոդվածը փոփ 23.06.15 ՅՕ-108-Ն)

Հոդված 58. Ջրային համակարգի օգտագործման իրավունքի փոխանցման պայմանները

Ջրային համակարգի օգտագործման իրավունքի փոխանցումն իրականացվում է , եթե`

1) Ջրային համակարգերի կառավարման մարմնի փոփոխման դեպքում Ջրային համակարգի օգտագործման իրավունքի պայմանագրի ժամկետները և պայմանները չեն փոխվում , իսկ իրավունքի փոխանցումը կատարվում է պետական Ջրային կադաստրում գրանցման համապատասխան փոփոխություն և կատարելու միջոցով .

2) սույն օրենսգրքի դրույթներին համապատասխան փոխանցված Ջրային համակարգի օգտագործման իրավունքն ազդում է երրորդ անձանց իրավունքներին վրա, կամ դրա արդյունքում կարող են փոփոխվել Ջրային համակարգը բնութագրող մեծությունները , կարող են սահմանվել Ջրային համակարգի օգտագործման նոր պայմաններ` առանց նախտեսլու

գործող շրջագործ ման թույլ տվող թյուրեղի և Կարգավորող հանձնաժողովի տրամադրած լիցենզիայի պայմանները :

(58-րդ հոդվածը փոփ 23.06.15 ՅՕ-108-Լ)

Հոդված 59. Ձրային համակարգերի կառավարչի իրավասու թյուրեղ

Ձրային համակարգի կառավարիչն իրավունք ունի՝

1) օգտագործել զրային համակարգը՝ սույն օրենսգրքի և շրջագործ ման թույլ տվող ան պահանջներին համապատասխան .

2) շրամատակարարներին և (կամ) շրջագործողներին պահանջել մատակարարված ջրի վճարը՝ համաձայն սահմանված կարգավորվող սակագների .

3) մուտք գործել ջրառի, ջրերի մշակման կամ տեղափոխման գործունեության իրականացնելու համար նախատեսված հողատարածքներ .

4) հրաժարվել զրային համակարգի օգտագործման և դրանից բխող այլ իրավունքներից՝ առավագնվեցամիսառաջ տեղեկացնելով այդ մասին Ձրային համակարգերի կառավարման մարմնին և Կարգավորող հանձնաժողովին .

5) զրային համակարգի օգտագործման պայմանագրում առաջարկել փոփոխություններ և լրացումներ .

6) առաջարկել երկարաձգել պայմանագրի գործողության ժամկետները՝ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում և կարգով .

7) զրային համակարգին վնաս պատճառած անձանց նկատմամբ վնասների հատուցման հայցեր ներկայացնել դատարան .

8) իրականացնել սույն օրենսգրքից բխող ցանկացած գործունեության, եթե զրային համակարգի օգտագործման պայմանագրով այլ բան սահմանված չէ .

9) իրականացնել օրենսդրության մեջ արգելված այլ գործողություններ :

(59-րդ հոդվածը լրաց. 23.06.15 ՅՕ-108-Լ)

Հոդված 60. Ձրային համակարգի կառավարչի պարտականությունները

Ձրային համակարգի կառավարիչը պարտավոր է՝

1) շրամատակարարներին և (կամ) շրջագործողներին ապահովել շրջագործ ման պայմանագրով սահմանված ռեժիմի, որակի և քանակի շրոջով .

2) ապահովել ստացվող և հատկացվող ջրի հաշվառումը .

3) վճարել օրենսդրության մեջ նախատեսված և պայմանագրով սահմանված վճարները .

4) կատարել ջրային համակարգի օգտագործման և պահպանման անվտանգությունն ուղղված պայմանագրային պահանջները .

5) գործել բնապահպանական սահմանված չափանիշներին և ընդհանուր դրույթներին համապատասխան .

6) ապահովել ջրային համակարգի օգտագործման իրավունքի պայմանագրով սահմանված այլ պարտականություններ :

Յոթված 61. Ոռոգման ջրամատակարարման կառավարման առանձնահատկությունները

(հոդվածն ուժը կորցրել է 24.10.11 ՅՕ-273-Ն)

Յոթված 61.1. Պետական և համայնքային սեփականություն և համարվող ոռոգման համակարգը

Ոռոգման համակարգը ըստ \$ ունկցիոնալ նշանակություն և դասակարգվում է՝

1) մայրուղային ոռոգման համակարգ՝ ջրային աղբյուրից սկիզբ առնող միջհամայնքային, տնտեսային կամ ներտնտեսային ոռոգման համակարգերին ոռոգման ջուր մատակարարող համակարգ (առաջին կարգի (հիմնական) ջրատարներ և պոմպակայաններ, մայր ջրանցքներ) .

2) ոռոգման միջհամայնքային (միջտնտեսային) համակարգ՝ մայրուղային ոռոգման համակարգից սկիզբ առնող մեկից ավելի համայնքներին ոռոգելի հողերին ոռոգման ջուր մատակարարող համակարգ (երկրորդ կարգի ջրանցքներ և պոմպակայաններ) .

3) ոռոգման տնտեսային համակարգ՝ մայրուղային կամ միջտնտեսային ոռոգման համակարգերից սկիզբ առնող և միայն մեկ համայնքի ոռոգելի հողերին ոռոգման ջուր մատակարարող համակարգ (երրորդ կարգի ջրանցքներ) .

4) ոռոգման ներտնտեսային համակարգ՝ տնտեսային ոռոգման համակարգերից, ինչպես նաև տեղական ջրաղբյուրներին սկիզբ առնող և միայն մեկ համայնքի ոռոգելի հողատարածքներին ոռոգման ջուր բաշխող համակարգ (չորրորդ կարգի ջրանցքներ կամ բաշխիչ ցանցեր) :

Պետական սեփականություն և համարվող առաջին և երկրորդ կարգի ոռոգման համակարգերը մասնավորեցման ենթակա չեն : Դրանք կարող են փոխանցվել միայն օգտագործման իրավունքով ջրամատակարարներին՝ սույն օրենսգրքով սահմանված կարգով :

Պետական սեփականություն և համարվող երրորդ կարգի ոռոգման համակարգերը, որոնք չեն կառուցվել մասնավոր ներդրումներով, կարող են սեփականություն իրավունքով փոխանցվել համայնքին :

Պետական սեփականություն և համարվող չորրորդ կարգի ոռոգման համակարգերը, որոնք չեն կառուցվել մասնավոր ներդրումներով, կարող են սեփականություն

իրավունքով տրվել համայնքին, շրամատակարարներին՝
Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ :
(61.1-ին հոդվածը լրաց. 24.10.11 ՅՕ-273-Ն)

Հոդված 61.2. Ոռոգման համակարգի կառավարումը

Ոռոգման շրամատակարարման հարաբերություններին
սուբյեկտներն են շրագտագործողը և շրամատակարարը, որոնց
լիազորություններին ցանկը և գործունեության կարգը
սահմանվում են օրենքով և Հայաստանի Հանրապետության
կառավարության որոշումներով :

Ոռոգման շրամատակարարման կառավարումը կարող է
իրականացվել Ջրային համակարգերի կառավարման մարմնի և
(կամ) մասնավոր կառավարման միջոցով :

Ոռոգման շրամատակարարման մասնավոր կառավարումը կարող
է իրականացվել մասնակցային կառավարման միջոցով
Շրագտագործողներին ընկերություններին (կամ)
Շրագտագործողներին ընկերություններին միություններին
կողմից՝ օրենքով սահմանված կարգով :

Ջրային համակարգերի կառավարման մարմնի կողմից ոռոգման
շրամատակարարման մասնավոր կառավարման դեպքում ոռոգման
համակարգերի օգտագործման իրավունքը կարող է փոխանցվել
սուբյեկտներին 6-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով :

Մասնակցային կառավարումն իրականացնող իրավաբանական
անձինքը և են ոռոգման համակարգի օգտագործման
նախապատվություն իրավունք :

(61.2-րդ հոդվածը լրաց. 24.10.11 ՅՕ-273-Ն)

Հոդված 62. Ջրային հողերի օգտագործման իրավունքը

Ջրային համակարգերի օգտագործման իրավունքը
տիրապետողները տնտեսական գործունեություն
իրականացնելու համար կարող են գետերի ողողահողներն ու
ջրային հողերն օգտագործման տրամադրել այլ անձանց՝
սահմանափակ և շրային պահպան գոտիների համար՝ շրագտագործման
թույլ տվող թույլություններով և (կամ) կարգավորող հանձնաժողովի
տրամադրած լիցենզիայով սահմանված պահանջների
պահպանմամբ : Ջրային համակարգերի օգտագործման իրավունքը
տիրապետողը գետերի ողողահողների ու ջրային հողերի
օգտագործման պայմանագիր այլ անձանց հետ կարող է կնքել ոչ
ավելի, քան ջրային համակարգերի օգտագործման իրավունքի
փոխանցման պայմանագրով նախատեսված ժամկետը : Ջրային
համակարգերի օգտագործման իրավունքի փոխանցումն այլ անձի
հիմք է գետերի ողողահողների ու ջրային ֆոնդի հողերի
օգտագործման պայմանագիրը լուծելու կամ փոփոխելու համար :

Ջրային հողերի օգտագործումը ջրային համակարգերի օգտագործման իրավունքի փոխանցման պայմանագրով կարող է սահմանափակվել կամ արգելվել՝ օրենսդրությամբ սահմանված կարգով:

(62-րդ հոդվածը փոփ 23.06.15 ՅՕ-108-Ն)

«Գ Լ ՈՒ Խ 6.1

ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԻՐԱՎԱՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 62.1. Ջրահեռացմանը ներկայացվող պահանջները

1. Ջրահեռացմանը ներկայացվող պահանջներն են.

1) արգելվում է արտադրական կեղտաջրերի արտանետումը ջրային ռեսուրսի մեջ, եթե փվյալ կեղտաջրի քանակական և որակական չափանիշները չեն համապատասխանում Հայաստանի Հանրապետության ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմնի կողմից հաստատված՝ թույլատրելի սահմանային արտահոսքի պահանջներին:

2) կենտրոնացված ջրահեռացման համակարգի բավարար թողունակության դեպքում թույլատրվում է արտադրական կեղտաջրերի արտանետումը կենտրոնացված ջրահեռացման համակարգ, եթե փվյալ կեղտաջրի բաղադրակազմը և հատկանիշները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված պահանջներին: Արտադրական կեղտաջուր արտանետողների կողմից արտադրական կեղտաջրերի՝ կենտրոնացված ջրահեռացման համակարգ արտանետման թույլատրելի սահմանային արտահոսքի և այլ լրացուցիչ պահանջները սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ.

3) արտադրական կեղտաջրերի՝ սույն հոդվածի 2-րդ կետի պահանջներին չհամապատասխանելու դեպքում, արտադրական կեղտաջուր արտանետողների կողմից պետք է իրականացվի դրանց նախնական մաքրում փեղային մաքրման կառուցվածքներում՝ մինչև կենտրոնացված ջրահեռացման համակարգ արտանետելը: Նախնական մաքրմանը ներկայացվող պահանջները սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ.

4) արգելվում է փարափային (հեղեղային) ջրահեռացման համակարգ կեղտաջրերի արտանետումը, բացառությամբ փարափային (հեղեղային) կեղտաջրերի.

5) արգելվում է ցամաքուրդային (դրենաժային) համակարգ կեղտաջրերի արտանետումը, բացառությամբ ցամաքուրդային (դրենաժային) կեղտաջրերի.

6) արգելվում է փարափային (հեղեղային) կեղտաջրերի ընդունումը կենտրոնացված ջրահեռացման համակարգ, եթե դա նախատեսված չէ ջրահեռացման համակարգի շինարարական և վերակառուցման աշխատանքների նախագծային փաստաթղթերով.

7) արգելվում է ցամաքուրդային (դրենաժային) կեղտաջրերի ընդունումը կենտրոնացված ջրահեռացման համակարգ:

Հոդված 62.2. Կեղտաջրերի հեռացումը և մաքրումը համայնքներում

1. Համայնքները պետք է ապահովված լինեն Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման պահանջներին համապատասխանող բնակավայրերի ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման համակարգերով:

2. Համայնքները, պետական կառավարման լիազոր մարմինները, ջրահեռացման համակարգի կառավարիչը (առկայության դեպքում) իրենց լիազորությունների սահմաններում պարտավոր են ապահովել համայնքի վարչական սահմաններում ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման ծառայությունների հասանելիությունը:

3. Համայնքների բնակավայրերի կեղտաջրերի հեռացմանը և կեղտաջրերի մաքրմանը ներկայացվող տեխնիկական պահանջները, այդ թվում՝ ջրահեռացման համակարգերին, մաքրման կառուցվածքներին, մեթոդին, տեխնոլոգիաներին և գործընթացներին ներկայացվող պահանջները, և դրանց կիրառման ժամանակացանկերն՝ ըստ համայնքների կամ բնակավայրերի սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ:

Հոդված 62.3. Կեղտաջրի նստվածքի նկատմամբ պահանջները

1.Կեղտաջրի նստվածքի օգտագործմանը, հավաքմանը, փոխադրմանը, կուրակմանը, մշակմանը, օգտահանմանը և հեռացմանը ներկայացվող պահանջները սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ:»:

Յոթված 68. Սահմանային թուլլատրելի չափանիշները

Սահմանային թուլլատրելի չափանիշները սահմանվում են, ելնելով՝

1) անտրոպոգեն սահմանային թուլլատրելի մակարդակից, որի երկարատև ազդեցությունը չի բերում շրաեկոհամակարգի բնական հատկությունների և կազմի փոփոխության՝ բնական սեզոնային և բազմամյա տատանումների սահմաններից դուրս .

2) ադտոտոդնյուլթերի գանգվածից, որը շրհավաքավազան է հասնում կազմակերպված և չկազմակերպված արտահոսքերի տեսքով:

Կեղտաջրերում ադտոտոդնյուլթերի սահմանային թուլլատրելի արտահոսքերի չափանիշները յուրաքանչյուր շրային ռեսուրսի համար սահմանվում են՝ ելնելով շրհավաքավազանի սահմաններում շուրն ադտոտոդնյուլթերի սահմանային թուլլատրելի կոնցենտրացիաների գերազանցման և հատակային նստվածքազոյացումներում շրակենսածիններում դրանց մնացորդային քանակների կուտակման անթուլլատրելիության պահանջներից:

Յոթված 75. ՀՏԿ-ների հաշվառումը

ՀՏԿ-ները հաշվառվում են պետական շրային կադաստրում:

ՀՏԿ-ների և դրանց օգտագործման պայմանների քանակական և որակական տվյալները մուտքագրվում են Ջրային համակարգերի կառավարման մարմնում:

«2.ՀՏԿ-ների (այդ թվում՝ ջրահեռացման համար օգտագործվող տրանսպորտային միջոցների) և դրանց օգտագործման պայմանների քանակական և որակական տվյալները մուտքագրվում են Ջրային համակարգերի կառավարման մարմնում, իսկ դրանց միջոցով կեղտաջրերի տեղափոխման մոնիտորինգի տվյալները՝ Հայաստանի Հանրապետության ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմնում:»:

Յոթված 78. Ջրօգտագործման և շրային համակարգի օգտագործման թուլլատրելիության թուլլատրելի ձեռքբերման վճարները

Չրօգտագործման և շրայի ն համակարգի օգտագործման թույլ տվող թյուրյունների «թույլտվության» ձեռքբերման համար վճարվում է պետական տուրք՝ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և չափով:

Լիազորմարմինը թույլ տվող թյան տրման, թույլ տվող թյան գործողության ժամկետի երկարաձգման, թույլ տվող թյան վերածնակերպման մասին որոշման ընդունումից հետո՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, պատշաճ ձևով այդ մասին տեղեկացնում է հայտատուին: Տեղեկացմամբ հայտատուն պետք է նախագգուշացվի սույն հոդվածով նախատեսված հետևանքների մասին:

Հայտատուն սույն հոդվածով սահմանված ծառայության մատուցման համար օրենքով սահմանված պետական տուրքը պարտավոր է վճարել ոչ ուշ, քան թույլ տվող թյան տրման, թույլ տվող թյան գործողության ժամկետի երկարաձգման, թույլ տվող թյան վերածնակերպման հայտը բավարարելու մասին պատշաճ ձևով տեղեկացումից հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում:

Հայտատուն և լիազորմարմին պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթ կարող է չներկայացնել: Հայտատուի կողմից պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթ չներկայացվելու դեպքում լիազորմարմինը թույլ տվող թյան տրման, թույլ տվող թյան գործողության ժամկետի երկարաձգման, թույլ տվող թյան վերածնակերպման հայտը բավարարելու մասին որոշումն ընդունելուց հետո գանձապետական առցանց կառավարման համակարգի կամ պետական վճարումների էլեկտրոնային համակարգի միջոցով հավաստիանում է պետական տուրքի՝ սույն հոդվածում նշված ժամկետում վճարված լինելու մասին և հայտատուին պատշաճ ձևով հանձնում կամ ուղարկում է թույլ տվող թյունը, ժամկետը երկարաձգված թույլ տվող թյունը, վերածնակերպված թույլ տվող թյունը, ինչպես նաև դրանց վերաբերյալ համապատասխան որոշումները:

Թույլ տվող թյունը, ժամկետը երկարաձգված թույլ տվող թյունը, վերածնակերպված թույլ տվող թյունն ու ժամկետը մտնում է թույլ տվող թյան, ժամկետը երկարաձգված թույլ տվող թյան, վերածնակերպված թույլ տվող թյան տրամադրման որոշման մասին պատշաճ ձևով տեղեկացումից հետո, իսկ հայտատուի կողմից պետական տուրքը թույլ տվող թյան, ժամկետը երկարաձգված թույլ տվող թյան, վերածնակերպված թույլ տվող թյան տրամադրման որոշման մասին պատշաճ ձևով տեղեկացումից հետո վճարման դեպքում՝ հայտատուի կողմից պետական տուրքը վճարվելու օրվանից: Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված ժամկետում հայտատուի

կողմից պետական տուրքը չվճարվելու դեպքում լիազորմարմնի կայացրած համապատասխան որոշումը չեղյալ է ճանաչվում:
(78-րդ հոդվածը փոփ 23.06.15 ՅՕ-108-Ն, խմբ. 29.06.16 ՅՕ-128-Ն)

Հոդված 101. Գյուղատնտեսական հողատարածքների ոռոգումը կեղտաջրերով

Կեղտաջրերով գյուղատնտեսական հողատարածքների ոռոգումը թույլատրվում է կառավարության սահմանած կարգով:
«Հոդված 101. Կեղտաջրերով գյուղատնտեսական հողատարածքների ոռոգումը թույլատրվում է, եթե կեղտաջրի որակը համապատասխանում է ոռոգման ջրի որակի ստանդարտների պահանջներին»:

Հոդված 103. Ջրակոհամակարգերի վրա ազդող շինարարական և այլ օբյեկտների նկատմամբ ներկայացվող պահանջները

Ջրային համակարգերի կամ ջրային ռեսուրսների վրա ազդող օբյեկտների շինարարական և վերակառուցման աշխատանքների նախագծային փաստաթղթերի փորձաքննությանը պարզում է դրանց համապատասխանությանը ելակետային տվյալներին, տեխնիկական պայմաններին, նախագծման, հաշվարկներին և շինարարության նկատմամբ սահմանված պահանջներին:

ՅՏԿ-ների շինարարական և վերակառուցման նախագծային փաստաթղթերը փորձաքննության կարող են ներկայացվել միայն դրանց հիդրավլիկական մոդելային հետազոտությանը ներառված արդյունքների առկայության դեպքում կամ այդպիսի հետազոտությանը ներառված ռոդոլոգիան հիմնավորումով:

Ջրային համակարգերի կամ ջրային ռեսուրսների վրա ազդող օբյեկտների շինարարական և վերակառուցման աշխատանքների նախագծային փաստաթղթերի փորձաքննությանն իրականացնում են համապատասխան լիցենզիաները անձինք:

Շինարարական և այլ օբյեկտի նախագծման, շինարարության, վերակառուցման, օգտագործման հանձնման և օգտագործման ընթացքում պետք է հաշվի առնվի դրա ազդեցությունը շրջակա միջավայրի վրա՝ ինչպես անմիջական տեղադրման գոտում, այնպես էլ ջրհավաքավազանի վրա ամբողջությամբ:

Ջրային ռեսուրսի վիճակի վրա ազդող նոր տեխնոլոգիաների ներդրման դեպքում պետք է հաշվի առնվի դրանց ազդեցությունը շրջակա միջավայրի վրա՝ ինչպես տեղադրման վայրում, այնպես էլ ջրհավաքավազանի վրա ամբողջությամբ:

Արգելվում է բնակավայրերում աղբավայրերը շահագործման հանձնել նաև անց ֆիլտրող կուտակիչների:

Արգելվում է ջրային համակարգի օգտագործման հանձնելը և օգտագործումը, որը ապահովված է՝

- 1) ջրերի աղբոտումը և աղտոտումը կամ դրանց վնասակար ազդեցությունը կանխող սարքերով.
- 2) վերցվող և թափվող ջրերի հաշվառման միջոցներով.
- 3) անհրաժեշտ ձևերով ապաշտպան հարմարանքներով.
- 4) ջրային ռեսուրսները և ջրհավաքավազաններն աղտոտումից պահպանող կառուցվածքներով.
- 5) գյուղացիական անասնապահական գործունեության ոլորտի համար նախատեսված սանիտարական գոտիներով:

Արգելվում է կեղտաջրերով ոռոգվող հողերն օգտագործման հանձնել և օգտագործել առանց ստորգետնյա ջրերի ռեժիմի դիտարկման համակարգի:

Յոթերորդ 104. Ջրային ռեսուրսների օգտագործումը կեղտաջրեր և ցամաքորոգային ջրերը նդունելու համար

Կեղտաջրերը և ցամաքորոգային ջրերն ընդունելու համար արգելվում է օգտագործել ջրային այն ռեսուրսը կամ դրամասը, որը՝

- 1) պարունակում է բնական բուժիչ ռեսուրսներ.
- 2) գտնվում է առանձնահատուկ պահպանվող ավազանային տարածքների կազմում.
- 3) գտնվում է առողջարանների, զբոսաշրջության, մարզական և ռեկրեացիոն նպատակներով օգտագործվող վայրերի հարևանությամբ.
- 4) հանդիսանում է արժեքավոր տեսակի ձկների ձվադրման և ձմեռման վայր.
- 5) հանդիսանում է արժեքավոր կենդանիների բնակավայր կամ բույսերի աճման տեղամաս:

Կեղտաջրերը և ցամաքորոգային ջրերն ընդունելու համար արգելվում է կլանող հորատանցքերի և ջրհորների կառուցումը:

Կեղտաջրերը և ցամաքորոգային ջրերը հանձնվում են ջրահեռացման համակարգ՝ ջրահեռացման պայմանագրով սահմանված կարգով:

Անցումային դրույթներ

1. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում 2019 թվականի հունվարի 1-ից, բացառությամբ Օրենսգրքի՝ սույն հոդվածի 2-5-րդ մասերով սահմանված

դրույթների, որոնք ուժի մեջ են մտնում նույն մասերով սահմանված ժամկետներում:

2. Օրենքի 5-րդ հոդվածով խմբագրվող 25.1 հոդվածի 1-ին մասը ուժի մեջ է մտնում 2020 թվականի հունվարի 1-ից:
3. Օրենքի 7-րդ հոդվածով լրացվող 62.1-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված՝ նախնական մաքրում իրականացնելու պահանջը ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 1-ից՝ արտադրական այն կեղտաջուր արտանետողների նկատմամբ, որոնց արտանետումներում կախված նյութերի կամ թթվածնի կենսաբանական պահանջի տարեկան քանակությունը կազմում է 1 տոննա եւ ավելի կամ ծանր մետաղների գումարային քանակությունը տարեկան կազմում է հարյուր կգ և ավելի, իսկ մնացած այլ արտադրական այն կեղտաջուր արտանետողների նկատմամբ՝ 2030 թվականի հունվարի 1-ից:
4. Օրենքի 7-րդ հոդվածով լրացվող 62.1 հոդվածի 5-րդ մասը ուժի մեջ է մտնում 2030 թվականի հունվարի 1-ից:
5. Օրենքի 7-րդ հոդվածով լրացվող 62.2-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը ուժի մեջ են մտնում 2030 թվականի հունվարի 1-ից:
6. Օրենքի 11-րդ հոդվածով խմբագրվող 101-րդ հոդվածը ուժի մեջ է մտնում 2020թ. հունվարի 1-ից:
7. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից՝
 - 1) Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը՝ հաստատում է ոռոգման ջրի որակի ստանդարտները՝ երկու տարվա ընթացքում.
 - 2) Հայաստանի Հանրապետության կառավարությունը սահմանում է համայնքների՝ բնակավայրերի կեղտաջրերի հեռացման և կեղտաջրերի մաքրման համակարգերին ներկայացվող տեխնիկական պահանջները և դրանց իրականացման ժամանակացույցը՝ երեք տարվա ընթացքում.
 - 3) Հայաստանի Հանրապետության կառավարությունը սահմանում է արտադրական կեղտաջուր արտանետողների կողմից արտադրական կեղտաջրերի՝ կենտրոնացված ջրահեռացման համակարգ արտանետման թույլատրելի սահմանային արտահոսքի և այլ լրացուցիչ պահանջները՝ երկու տարվա ընթացքում.
 - 4) Հայաստանի Հանրապետության ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմինը սահմանում է արտադրական կեղտաջուր արտանետողների կողմից արտադրական կեղտաջրերի՝ ջրային ռեսուրս

արտաներման դեպքում թույլատրելի սահմանային արտահոսքի պահանջները՝ երկու տարվա ընթացքում.

- 5) Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում նախատեսվում է վարչական պատասխանատվություն Օրենքի 7-րդ հոդվածով լրացվող 62.1-րդ հոդվածի 1-ին մասի 4-7-րդ կետերով սահմանված պահանջների խախտման համար՝ վեց ամսվա ընթացքում:
8. Սույն օրենքի դրույթները չեն բացառում այլ օրենքներով բնապահպանական վճարների գծով արտոնությունների տրամադրումը: